ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԴԻ ԿՈՄԻՏԱՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԼՈՒՍԻՆԷ ՍԱՀԱԿԵԱՆ
lusine_sahakyan72@mail.ru

ՄՈՒՏՔ

Սոյն յօդուածը նուիրուած է հայ երաժշտագիտութեան կարեւոր ճիւղերից մէկի՝ կոմիտասագիտութեան ձեւաւորման եւ կայացման ընթացքին, ինչպէս նաեւ արդի կոմիտասագիտութեանն առնչուող որոշ հիմնախնդիրների:

Կոմիտասագիտութիւնը հայ երաժշտագիտութեան զարգացող ոլորտներից է: Շուրջ մէկդարեայ պատմութեան ընթացքում կոմիտասագիտութեան մէջ ստեղծուել է բազմահատոր աշխատութիւնների մի պատկառազդու հաւաքածու, որտեղ հնարաւոր ամբողջութեամբ վերլուծուած եւ լուսաբանուած են մեծ երաժշտի գիտական կենսագրութեան, երաժշտական եւ երաժշտագիտական ժառանգութեան զգալի հատուածը: Հայագիտութեան տարբեր ոլորտներում նոյնպէս անդրադարձ է եղել Կոմիտաս վարդապետի կերպարին, գեղարուեստական-գեղագիտական հայեացքներին: Յօդուածում անդրադարձ է արւում կոմիտասագիտութեան մէջ զգալի ներդրում ունեցած երաժշտագէտներին, ինչպէս նաեւ քննւում են այն ուսումնասիրութիւններն ու աշխատութիւնները, որոնք առանցքային դեր են ունեցել կոմիտասագիտութեան զարգացման համար:

Յայտնի է, որ Կոմիտաս վարդապետը ոչ միայն հայ ազգային յօրինողական դպրոցի հիմնադիրն է, այլեւ հայ բանագիտութեան, երաժշտական միջնադարագիտութեան հիմնադիրներից, որը գիտական հիմքերի վրայ դրեց այդ ոլորտների ուսումնասիրութիւնը: Կոմիտաս վարդապետի երաժշտա-տեսական եւ համեմատական ուսումնասիրութիւնների միջոցով ուղիներ նշագծուեցին էթնօ-երաժշտագիտութեան յետագայ զարգացման համար:

Յօդուածում կարեւորւում եւ քննւում են նաեւ հետեւեալ հարցերը.-

ա) Ինչպէ՞ս է ձեւաւորուել ու զարգացել հայ երաժշտագիտութեան առանցքային ոլորտը՝ կոմիտասագիտութիւնը.

բ) Ինչպէ՞ս է մեր օրերում դիտարկւում Կոմիտաս-յօրինողի ստեղծագործական առաքելութիւնը, երաժշտութեան մէջ ձեւաւորած աւանդոյթները.

գ) Ինչպէ՞ս է հայ արդի երաժշտագիտական միտքն արժեւորում Կոմիտասի երաժշտա-տեսական հիմնադրոյթներն ու մանկավարժական սկզբունքները.

դ) Ի՞նչ նոր վաւերաթղթերով է համալրւում կոմիտասեան արխիւը, ի՞նչ ուղղութիւններով է զարգանում արդի կոմիտասագիտութիւնը:

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Ինչպէս իւրաքանչիւր ստեղծագործող անհատի, յատկապէս նորարար անհատի, այնպէս էլ Կոմիտաս վարդապետի գործի գնահատութիւնն ու արժեւորումն ունեցաւ հաստատման իր ճանապարհը: Տակաւին ողջութեան, Կոմիտասի նշանաւոր ժամանակակիցներից շատերը նկատեցին նրա բազմաբնոյթ գործունէութեան մեծ կարեւորութիւնը:

Վարդապետի արուեստով ձեւաւորուեց, նրա շուրջ հիւսուեց հայ երաժշտագիտութեան կարեւոր ճիւղերից մէկը՝ կոմիտասագիտութիւնը: Կոմիտասին նուիրուած աշխատութիւններն առանցքային նշանակութիւն են ունեցել ոչ միայն երաժշտագիտական ոլորտների, այլեւ հայ յօրինողական դպրոցի եւ կատարողական արուեստի համար: Հայ յօրինողներից շատերի համար սեղանի գիրք եղել եւ մնում են Կոմիտաս վարդապետի երաժշտական ստեղծագործութիւնները, ինչպէս նաեւ յօդուածները եւ ուսումնասիրութիւնները: Որպէս երգիչ, խմբավար ու մանկավարժ Կոմիտասի կատարողական եւ մանկավարժական-գեղագիտական հայեացքներն այսօր էլ ունեն գործնական հսկայական նշանակութիւն:

Նրա երաժշտական-վերլուծական տեսակէտերն ու մտքերը ուղենիշ են ոչ միայն հայ, այլեւ օտարազգի երաժիշտ-տեսաբանների մի շարք մտահանգումների համար:

Աւելին, հայ երաժշտագիտութեան մէջ գրեթէ գոյութիւն չունի յետկոմիտասեան շրջանի որեւէ երաժշտագիտական ուսումնասիրութիւն, որտեղ անդրադարձ չլինի Կոմիտասին:

Արուեստագէտի իր կերպարով Վարդապետը նման է Վերածննդի դարաշրջանի այն հսկաներին, որոնց ստեղծագործական ժառանգութեան մէջ դժուար էր տարանջատել ամենակարեւորը: Կոմիտասի բազմոլորտ գործունէութեան բոլոր բնագաւառները կարեւոր են եւ շաղկապուած միմեանց:

Այդուհանդերձ, Վարդապետի ժառանգութիւնը մշտապէս դիտարկուել է որոշակի տրամաբանութեամբ եւ շեշտադրումներով:

Կոմիտասին նուիրուած աշխատութիւնները կարելի է դասդասել ըստ ժանրերի.- 1) գիտական ուսումնասիրութիւններ, 2) յուշագրութիւններ, 3) գրական-գեղարուեստական երկեր, 4) թատերական ներկայացումներ, 5) Կոմիտասը գեղանկարչութեան մէջ, 6) Կոմիտասի նամականին, մտքերը եւն., 7) Կոմիտասի երաժշտա-մանկավարժական հայացքները:

Կոմիտասի անձի եւ արուեստի լուսաբանման հարցերում կարեւոր է թէ՛ արեւելահայ եւ թէ՛ արեւմտահայ մտաւորականների գործուն մասնակցութիւնը: Կոմիտասագիտութեան ձեւաւորման ակունքներում արեւելահայ երաժշտագէտներից շատերը քննութեան են ենթարկել նրա ազգագրական-բանահաւաքչական եւ երաժշտագիտական գործունէութիւնը: Արեւմտահայ

իրականութեան մէջ Վարդապետի գործունէութիւնը դիտարկում էր նաեւ պատմա-քաղաքական եւ գեղագիտական տեսանկիւնից:

Կոմիտասի առինքնող անհատականութիւնն իր շուրջն էր հաւաքում ժամանակի արուեստագէտներին, մտաւորականներին[1]: Կարող ենք ասել, որ կոմիտասագիտութիւնը ձեւաւորուել է Վարդապետի գործունէութեան օրօք[2] եւ ունեցել զարգացման իր փուլերը:

1901ին Փարիզում, Արշակ Չօպանեանը *Անահիտ* հանդէսում լոյս է ընծայում իր «Կոմիտաս վարդապետ» յօդուածը[3], որն իր վերլուծական բնութագրումներով նոր էջ է բացում Կոմիտասի ստեղծագործութեան լուսաբանման հարցերում[4]:

Չօպանեանն իրաւամբ Կոմիտասին ներկայացնում է որպէս ստեղծագործող-յօրինող, հետազօտող-գիտնական, արտակարգ խմբավար, հայ եւ արեւելեան բանահիւսութեան բանասէր-բանահաւաք: Նա մեկնաբանում եւ արժեւորում է Կոմիտաս վարդապետի գործի նշանակութիւնը՝ ազգային երաժշտարուեստի յառաջընթացի, մասնագիտական երաժշտութեան զարգացման համար:

Հակիրճ, պերճախօս եւ բովանդակալից գրելաոճով Չօպանեանը ապացուցում է Կոմիտասի արուեստի նշանակութիւնը՝ նրան անուանելով «Քսաներորդ դարու Շնորհալի»[5]:

Չօպանեանի կարծիքով Կոմիտասն է այն երաժիշտը, որ հայ երաժշտութիւնը արմատապէս կը վերանորոգի իր «աղաւաղումէն ու անկումէն»[6]: Եւ միայն դրանից յետոյ, ըստ Չօպանեանի, հայ երաժշտութիւնն ի զօրու կը լինի համաշխարհային երաժշտութեան մէջ գրաւել իր արժանի տեղը:

---

[1] Լուսինէ Սահակեան, «Կոմիտաս վարդապետը եւ ֆրանսիական մշակոյթը», *Կանթեղ*, 3(68):2016, Երեւան, էջ 242-63. նաեւ՝ "Komitas Vardapet (Archimandrite) et l'art français," *Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տարեգիրք, հատոր Դ*, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., Երեւան, 2019, էջ 38-48. նաեւ՝ Լուսինէ Սահակեան, «Կոմիտաս վարդապետը եւ ռուսական մշակոյթը», *Կոմիտաս վարդապետ, յօդուածների ժողովածու նուիրուած Կոմիտաս վարդապետի ծննդեան 150ամեակին*, Տիգրան Մեծ հրատ., Երեւան, 2019, էջ 103-25:

[2] Լուսինէ Սահակեան, *Կոմիտասագիտութիւնը հայ երաժշտագիտութեան մէջ*, Տիգրան Մեծ հրատ., Երեւան, 2010.

[3] Արշակ Չօպանեան, «Դէմքեր. Կոմիտաս վարդապետը», *Անահիտ*, 6-7:1901, էջ 142-43:

[4] 1901ից սկիզբ է առնում Կոմիտաս վարդապետի եւ գրող, բանասէր ու հասարակական գործիչ Չօպանեանի բարեկամութիւնը, որը շարունակուել է մինչեւ Վարդապետի գիտակցական կեանքի աւարտը:

[5] Նոյն, էջ 142:

[6] Չօպանեան, էջ 142:

Կոմիտասի արուեստի ճանաչման, գիտական արժեւորման գործում նշանակալից եղաւ նրա աշակերտ, յօրինող, երաժշտական հասարակական գործիչ Սպիրիդոն Մելիքեանի դերը:

Իր մեծ ուսուցչի հանդէպ տածելով ջերմ, բարեկամական զգացումներ՝ Մելիքեանը եղաւ նրա ստեղծագործութեան առաջին լուրջ լուսաբանողներից, նաեւ՝ քննադատներից մէկը: 1930ին Մելիքեանը *Կոմիտաս* ժողովածուում[7] ընդգրկում է իր «Կոմիտաս» («Պատմական ակնարկ») յօդուածը՝ հակիրճ բնութագրելով նաեւ պատմամշակութային այն շրջանը, ուր ապրել եւ ստեղծագործել է մեծանուն երաժիշտը:

Հայ երաժշտութեան զարգացման կարեւոր երեւոյթներից էր Մելիքեանի ջանքերով 1931ին հրապարակուած *Ազգագրական ժողովածուն*, որի նիւթը 1904ին նա արտագրել էր Կոմիտասի բնագրից: Այս *Ազգագրական ժողովածուն* իր գեղարուեստական եւ գիտական արժանիքներով հայ ժողովրդական երգարուեստի ընտրանի է[8]:

Կոմիտաս ժողովածուին յաջորդում է Մելիքեանի վերջին աշխատութիւնը՝ *Կոմիտասի ստեղծագործութիւնների անալիզը* գրքոյկը, որը Վարդապետին տրուած նրա գնահատութիւնների հանրագումարն է[9]:

ժամանակագրական առումով, երաժշտագէտ Ռուբէն Թերլեմեզեանի *Կոմիտաս* գրքոյկը[10] եւ Մելիքեանի վերոնշեալ աշխատութիւնները Վարդապետի ստեղծագործութեան առաջին մասնագիտական վերլուծութիւններն են, որտեղ քննւում են յօրինողի երգարուեստի լեզուաոճական եւ ձեւակազմական առանձնայատկութիւնները:

Կոմիտասագիտութեան 1950-90ականները կարեւորուեցին Ալեքսանդր Շահվերդեանի[11], Իզաբելա Եոլեանի[12], Նիկողոս Թահմիզեանի[13], Գէորգ

---

[7] Կոմիտաս, *Ժողովածու*, կազմ.՝ Ռ. Թերլեմեզեան, Պետհրատ, Երեւան, 1930, էջ 14-27:

[8] Կոմիտասի նոտագրած 255 երգ Մելիքեանը Կոմիտասի թոյլտուութեամբ արտագրել եւ իր հետ տարել էր Պերլին ուսումնառութեան՝ «օտար ազդեցութիւններից» խուսափելու համար:

[9] Սպիրիդոն Մելիքեան, *Կոմիտասի ստեղծագործութիւնների անալիզը*, հրատ. Մելքոնեան ֆոնդ, Երեւան, 1932:

[10] Վիեննայի երաժշտանոցում կրթութիւն ստացած Թերլեմեզեանի 1924ին հեղինակած *Կոմիտաս վարդապետի կեանքը եւ գործունէութիւնը* աշխատութիւնը վերահրատարակուել է՝ Ռուբէն Թերլեմեզեան, *Կոմիտաս*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1992:

[11] Ալեքսանդր Շահվերդեան, *Հայ երաժշտութեան պատմութեան ակնարկներ, 19-20-րդ դարեր*, Հայպետհրատ, Երեւան, 1959, էջ 352-503:

[12] Իզաբելա Եոլեան, *Կոմիտաս*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969:

[13] Նիկողոս Թահմիզեան, *Կոմիտասը եւ հայ ժողովրդի երաժշտական ժառանգութիւնը*, Դրազարկ հրատ., Փասատենա, 1994:

Գէորգ Գէոդակեանի[14], երաժշտագիտական դպրոց ստեղծած բացառիկ գիտնական Քրիստափոր Քուշնարեանի հիմնարար հետազօտութիւններով[15]: Ուսումնասիրողներ, որոնք առանձնայատուկ խստապահանջութեամբ են մօտեցել կոմիտասեան ժառանգութեանը:

2007ին Հայաստանի Հանրապետութեան ԳԱԱ արուեստի ինստիտուտում տողերիս հեղինակի պաշտպանած ատենախօսութեան մէջ մանրամասնելով կոմիտասագիտութեան զարգացման փուլերը եւ այն երաժշտագէտներին, ովքեր ներդրում են ունեցել այդ ոլորտի զարգացման, 1950-90ականները համարել ենք կոմիտասագիտութեան ծաղկման շրջան[16]:

Յետագայ մեր ուսումնասիրութիւնները եկան հաստատելու այն իրողութիւնը, որ գիտութեան վերելքի այդ շրջանը կապուած էր միջազգային ճանաչում ունեցող երաժշտագէտ, կոմիտասագէտ Ռոբերտ Աթայեանի գործունէութեան հետ:

ՌՈԲԵՐՏ ԱԹԱՅԵԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԱԿԱՆԸ

Ազգային երաժշտութեան դասական Կոմիտաս վարդապետի ստեղծագործութիւնը հայ մշակոյթը ներկայացնում է իր հնարաւոր ամբողջութեան մէջ: Որքան կարեւոր էր Կոմիտասի ժառանգութեան հրապարակումը, նոյնքան եւ կարեւոր էր դրա գիտական իմաստաւորումը, որն իրագործեց **կոմիտասագէտ** (այստեղ այս կոչումն ու անուանումը տալիս ենք աներկբայ) Ռոբերտ Աթայեանը[17]: Անսահման նուիրումը - ճիշտ կը լինէր ասել՝ պաշտամունքը - Կոմիտասի նկատմամբ, կոմիտասեան ժառանգութեան

---

[14] Գէորգ Գէոդակեան, *Էջեր հայ երաժշտութեան պատմութիւնից*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2009, էջ 229-67:

[15] Христафор Кушнарев, *Вопросы истории и теории армянской монодической музыки*, (Քրիստափոր Քուշնարեան, Հայ միամեղեդի երաժշտութեան պատմութեան եւ տեսութեան հարցեր), Պետական երաժշտական հրատ., Լենինկրատ, 1958:

[16] Ատենախօսութեան գրականութեան ցանկը բաւական ծաւալուն է: Հնարաւոր ամբողջութեամբ մէկտեղուած են Կոմիտաս վարդապետի անձն ու գործը լուսաբանող ուսումնասիրութիւնները (հայերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ ռուսերէն):

[17] 2021 Հոկտեմբերի 27ին Երեւանի Կոմիտասի անուան պետական կոնսերվատորիայում կայացաւ հայ երաժշտագիտութեան երախտաւոր, Աթայեանին նուիրուած տողերիս հեղինակի մենագրութեան (*Ռոբերտ Աթայեան*, կազմ.՝ Լուսինէ Սահակեան, խմբ.՝ Գուրգէն Գասպարեան, հեղինակային հրատ., Երեւան, 2021) շնորհանդէսը: Մենագրութեան լոյս ընծայումը մի փոքրիկ խոնարհում էր մեծ գիտնականի վաստակի առջեւ: Գիտնական, ում հետազօտութիւնների եւ ուսումնասիրութիւնների շնորհիւ ընդլայնուեց եւ զարգացաւ հայ երաժշտագիտութեան ամենաբարդ ու հեռանկարային ոլորտներից մէկը՝ կոմիտասագիտութիւնը: Աթայեանը կերտեց իր Կոմիտասականը՝ յագեցած իսկական մտաւորականին բնորոշ երկար ու բարդ ճանապարհով:

մանրակրկիտ ուսումնասիրումը եւ հանրահռչակումը դարձան Աթայեանի կեանքի գործը:

Կոմիտասին նուիրուած Աթայեանի յօդուածները կարելի է դասդասել ըստ ժանրերի.-

ա) **Տեսական-վերլուծական**. Կոմիտասի երաժշտական-ազգագրական, ստեղծագործական եւ երաժշտագիտական ժառանգութեան վերլուծութիւն,

բ) **Պատմական-քննական.** Կոմիտասի արխիւային նիւթերի, պատառիկների, կենսագրական փաստերի յայտնաբերում, համերգային գործունէութեան, աստեղծագործական շրջանների լուսաբանում,

գ) Կոմիտասեան նորայայտ ձեռագրերի, նամակագրութեան կամ նորայայտ նիւթերի հրապարակում: Կոմիտասի ժամանակակիցների, աշակերտների յուշագրութիւններ, Կոմիտասին առնչուող որեւէ տեղեկատուութեան հրապարակում ՝ մեկնաբանութեամբ:

1949 Սեպտեմբերի 26ի ՀՍՍՀ նախարարների խորհրդի որոշմամբ (Կոմիտասի ծննդեան 80ամեակի առիթով) Հայաստանի ԳԱԱ արուեստի ինստիտուտին յանձնարարուեց Կոմիտասի երկերի հրատարակութիւնը:

Այսօր կարող ենք հաւաստել. մեծ բարեբախտութիւն էր, որ հայ ականաւոր գրականագէտ-թատերագէտ, ակադեմիկոս Ռուբէն Զարեանը, (ով 1958ից ղեկավարում էր ԳԱԱ արուեստի ինստիտուտը առաջարկեց) Աթայեանին՝ զբաղուել Կոմիտասի ժառանգութեամբ եւ ակադեմական հրատարակութեամբ:

Այս ազգանուէր գործը յանձնարարուեց նուիրեալ ու հմուտ տեսաբանի: Ժամանակի մէջ հաստատուեց Զարեանի կանխատեսումը. Աթայեանը միմիայն ինքը պէտք է յայտնաբերէր, վերծանէր, ուսումնասիրէր ու հրատարակէր Մեծն Կոմիտասի երաժշտական եւ երաժշտագիտական ժառանգութիւնը: Գործ, որը հաւասարազօր էր սխրանքի:

Մինչեւ կոմիտասեան ժառանգութեան ակադեմական հրատարակութեան խմբագիր դառնալը Աթայեանը պատկառազդու ներդրում ունէր կոմիտասագիտութեան մէջ: Բազմաթիւ յօդուածներում երաժշտագէտը հետազօտել եւ արժեւորել էր կոմիտասեան ժառանգութեան պատմութեան եւ տեսութեան մի շարք հարցեր[18]:

---

[18] Կոմիտաս վարդապետի ներդաշնակութեան առանձնայատկութիւններին է նուիրուած Աթայեանի առաջին ծաւալուն յօդուածը «Ժողովրդական երգի ներդաշնակութեան սկզբունքը Կոմիտասի մօտ» խորագրով, ուր առաջին անգամ տեսական վերլուծութեան նիւթ է դառնում Կոմիտասի *Ազգագրական ժողովածուն* (Ռոբերտ Աթայեան, «Ժողովրդական երգի ներդաշնակութեան սկզբունքները Կոմիտասի մօտ», *Տարեգիրք,* 9:1949, ՀՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի հրատ., Երեւան, էջ 87-113): Աթայեանի աշխատութիւնների մատենագիտական ցանկը կարող էր դառնալ առանձին գրքոյկ ոչ միայն իր ծաւալով, այլեւ իր բովանդակութեամբ, ասելիքի խորութեամբ (տե՛ս՝ Սահակեան, *Ռոբերտ Աթայեան*, էջ 331-45):

Աթայեանի կողմից երկերի ակադեմական հատորների հրատարակումը, Կոմիտասի ձեռագրերի յայտնաբերումն ու տեսական վերլուծութիւնը յիրաւի սխրանք էր խորհրդային իրականութեան մէջ: Եւ... գուցէ կայսերական պահանջներ եւ գաղափարախօսութիւն ունեցող երկրում, խստագոյն գրաքննութեան եւ մասնագիտական մրցակցութեան պայմաններում աթայեանական գրիչն առաւել թրծուեց եւ յղկուեց: Չմոռանանք, որ Աթայեանը թղթակցել է ժամանակի յայտնի հանրագիտարաններին, նա էր Քուշնարեանի հիմնարար ուսումնասիրութեան խմբագիրը, նա էր հանդէս գալիս միջազգային երաժշտագիտական հեղինակատր գ-իտաժողովներում, հեղինակում բազում այլ աշխատանքներ...: ԽՍՀՄ երաժշտագէտները քաջատեղեակ էին Աթայեանի՝ արդէն այդ շրջանում (1940-50ականներ) Կոմիտասին նուիրուած լրջմիտ ու ծանրակշիռ ուսումնասիրութիւններին: Ուսումնասիրութիւններ, որոնք Կոմիտասի անձն ու գործը լուսաբանում էին նոր տեսանկիւնով, երաժշտագիտական հարցերի համապարփակ քննարկումով:

Կոմիտասագիտութեան ասպարէզում ծանրակշիռ ներդրում է ունեցել եւ շարունակում է ունենալ ՀՀ ԳԱԱ արուեստի ինստիտուտը. Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմական հրատարակութեան հետ մէկտեղ (1960-2006) ինստիտուտն իրականացրել եւ իրականացնում է Կոմիտասի ժառանգութեան առանձին հարցերին նուիրուած գիտական ուսումնասիրութիւնների հրապարակումը՝ «Կոմիտասական» խորագրով ժողովածուի հատորներով[19]:

Դեռ աւելին, Աթայեանի տքնաջան աշխատանքների շնորհիւ հաւաքուած եւ հրատարակութեան էին նախապատրաստուած Կոմիտասի երկերի յաջորդ հատորների ե՛ւ երաժշտական նիւթը, ե՛ւ ծանօթագրութիւնները: Աթայեանի մահուանից յետոյ այդ հատորների համակարգուած հրատարակման գործին ձեռնամուխ եղաւ հմուտ երաժշտագէտ Գէորգ Գէօդակեանը[20]:

---

[19] *Կոմիտասական. յօդուածների ժողովածու, հատոր 1-ին*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969. նաեւ՝ *Կոմիտասական. յօդուածների ժողովածու, հատոր 2-րդ*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981. նաեւ՝ *Կոմիտասական. յօդուածների ժողովածու*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2019: Կոմիտասագիտութեանը նուիրուած թեմաներ արծարծւում են ՀՀ ԳԱԱ արուեստի ինստիտուտի *Արուեստագիտական հարցեր* պարբերականում եւս:

[20] Ռոբերտ Աթայեանի ողջութեան (մահ. 1994) հրատարակուեց վեց հատոր, որոնցում զետեղուած են Կոմիտասի աշխարհիկ ստեղծագործութիւնները՝ Ի հատոր - *մեներգեր* (1960), երկրորդ՝ *խմբերգեր* (1965), երրորդ՝ *խմբերգեր* (1969), չորրորդ՝ *խմբերգեր եւ մեներգեր* (1976), հինգերորդ՝ *մեներգեր, զուգերգեր, եռերգ եւ խմբերգեր* (1979), վեցերորդ՝ *դաշնամուրային ստեղծագործութիւններ* (1982): Իրար յաջորդեցին եօթերորդ հատորը՝ *Պատարագ* (1997), ութերորդը՝ *Հոգեւոր ստեղծագործութիւններ* (1998), իններորդից-տասներեքերորդը (1999, 2000 եւ 2004), ուր զետեղուած է Կոմիտասի երաժշտաազգագրական ժառանգութիւնը:

Մենագրութեան վրայ աշխատելու ընթացքում պարզուեց, որ Աթայեանը նորից է խմբագրել երկերի հատորները (իր, այսպէս ասած, գիտական մեթոդը կամ սովորութիւնն էր՝ վերանայել, լրամշակել, թարմացնել, խմբագրել արդէն հրատարակուած նիւթը):

1993ին, Աթայեանը մեկնում է Ամերիկայի Միացեալ Նահանգներ՝ իր հետ տանելով Կոմիտասի ակադեմական հատորների վերանայուած, վերախմբագրուած եւ լրամշակուած տարբերակները: Տանում է՝ վերահրատարակելու իր կեանքի ոսկերչական աշխատանքը:

Մեր ձեռքին են Աթայեանի աշխատասիրութեամբ Կոմիտասի երկերի բովանդակութեան, հատորների քանակի հետ կապուած ձեռագիր եւ մեքենագիր տարբերակները:

Արուեստի ինստիտուտի նախաձեռնութեամբ, Կլենտէյլի «Լարք» երաժշտական ընկերութեան (հիմնադիր Վաչէ Պարսումեան) ֆինանսական հովանաւորութեամբ 2022ից սկսուել է Աթայեանի վերախմբագրած Կոմիտասի երկերի հատորների վերահրատարակումը՝ դասական ուղղագրութեամբ: **Մեծ ու կարեւոր իրադարձութիւն արդի կոմիտասագիտութեան մէջ:**

Կոմիտաս վարդապետին նուիրուած Աթայեանի իւրաքանչիւր յօդուած կամ ուսումնասիրութիւն գիտական ձեռքբերում է (չեմ անդրադառնում Աթայեանի հայ եւ համաշխարհային երաժշտութեանը նուիրուած աշխատութիւններին): Այնքան խիտ է նրա ասելիքը, այնքան բազմաշերտ, որ այսօր, ասես, այդ թանձրութիւնը բացելու, նորովի մեկնաբանելու կարիք է առաջանում: Չնսեմացնելով անցեալի մեր երախտաւորների ներդրումը կոմիտասագիտութեան մէջ՝ այդուհանդերձ կարող ենք համոզուած ասել, որ Աթայեանի դերը կոմիտասագիտութեան մէջ անուրանալի է: Երաժշտագէտը մշակեց միմիայն իրեն բնորոշ իւրայատուկ գրելաոճ՝ հակիրճ, համոզիչ, հիմնաւոր ու հայեցի:

Կոմիտասագիտութեան զարգացման ընթացքն ուսումնասիրելիս Աթայեան-գիտնականի կերպարը դառնում է առաւել մեծ ու նշանակալի: Ի՞նչ խիզախում էր գիտնականի համար 1957ին գնալ Արցախ, որպէսզի փրկէր ու նորից ձայնագրէր Ղարաբաղի հոռովելները: Քանի՜ վերադաս մարմնի էր դիմում ու խնդրում՝ Ֆիզուլիի (Վարանդայի) կիսաքանդ եկեղեցին այցելելու ու Վարանդայի հոռովելի տարբերակներ լսելու համար: Ի՞նչ զգուշութեամբ ու դիւանագիտութեամբ էր Աթայեանը գրում համեմատական երաժշտագիտութեան միջազգային ինստիտուտին, Չեխոսլովաքիայի գիտութիւնների ակադմիային, արեւելագիտութեան ինստիտուտին, Ժընեւի երաժշտանոցի տնօրինութեանը, Պոլսի պատրիարքարանին, Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան, Վիեննայի Մխիթարեան միաբանութեանը, Փարիզի Նուպարեան մատենադարանին, Կոմիտասի փարիզաբնակ աշակերտներին ուղղուած նամակները, որոնք ընթերցում ու վերծանում էին սովետական գաղտնի ծառայութիւնների կողմից**: Երբեք չյուսահատուելով**

եւ չընկրկելով արգելքների եւ խոչընդոտների առջեւ՝ Աթայեանն, ում հայրն ու պապը աշակերտել էին Կոմիտաս վարդապետին, իր նշագծած ճանապարհով կերտում էր իր Կոմիտասականը: Նրա համար գերագոյն նպատակ ու առաքելութիւն էր Կոմիտասին Մայր Հայաստան վերադարձնելը: Նա մասունքի պէս հաւաքում էր Կոմիտասի աշխարհասփիւռ ձեռագրերն ու դրանք կենտրոնացնում Մայր Հայաստանում, ասես, մեզ՝ յետագայ երաժշտագէտներիս համար էր կուտակում այդ գանձը:

Տեղին է յօրինող Տիգրան Մանսուրեանի՝ Կոմիտասին տրուած գնահատականը, որը համահունչ կը լինի նաեւ Աթայեանին. «*Հրաշք է, որ մի ժողովրդի երաժշտական մտածողութեան դարաւոր կուտակումը դառնայ մէկ մարդու քննութեան նիւթ, դառնայ նրան հասանելի իր բոլոր գաղտնիքներով, թրթռումներով, խաղ ու հմայքով: Եւ նամանաւանդ իր օրէնքներով*»[21]:

Աթայեանի քննութեան նիւթը Կոմիտասի հրաշագործ երաժշտութիւնն էր իր բոլոր օրէնքներով: Այդ գրուած ու չգրուած օրէնքներով էլ Աթայեանը կերտեց իր՝ առ այսօր չգերազանցուած Կոմիտասականը:

ԿՈՄԻՏԱՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1994ին ԱՄՆում հրապարակած *Կոմիտասը եւ հայ ժողովրդի երաժշտական ժառանգութիւնը* գրքում պրոֆեսոր Նիկողոս Թահմիզեանը գրում է. «*Եւ սակայն, դեռեւս չի առաջանում այն զգացողութիւնը, թէ գոնէ հիմնական գծերով հասկացուած է Կոմիտաս-երեւոյթը եւ կամ թէ պարզաբանուած են նրա կեանքի ու գործի ուսումնասիրութեանը կապուած կարեւորագոյն հարցերը: …Մի շարք կարեւոր խնդիրներ կան, որոնք լուծուած չեն տակաւին մեր երաժշտագիտութեան մէջ, եւ որոնց անհրաժեշտ է անդրադառնալ ժամանակ առ ժամանակ*»[22]:

Կոմիտասագիտական ձեռքբերումների կողքին Թահմիզեանը իրաւամբ նշում է. «*Կոմիտասագիտութեան ասպարէզում տակաւին շատ ու շատ անելիքների մի հսկայական բեռ ունենք*»[23]:

Կոմիտասագիտական արդի անելիքներից կամ հիմնախնդիրներից մենք կարեւորում ենք.-

1. Կոմիտաս-յօրինողի դերն ու նշանակութիւնը, Կոմիտասի ստեղծագործական առաքելութեան արժեւորումը համաշխարհային երաժշտութեան ենթախորքում, Կոմիտասի ստեղծագործութիւնների տարբերակային ուսումնասիրութիւնն ու համեմատական վերլուծութիւնը:

Անհրաժեշտ է (եւ կարծում եմ, շատերս փորձում ենք) մշակել Կոմիտասի բնորոշմամբ «**Ինքնուրոյն բնաւորութիւն**», ազգային ոգի ու ոճ ունեցող ե-

---

[21] Տիգրան Մանսուրեան, «Կոմիտասը մեծ վերանորոգիչ», *Հայրենիքի ձայն*, 5 Նոյեմբեր 1969:

[22] Թահմիզեան, էջ 1:

[23] Նոյն:

ռաժշտական ստեղծագործութիւնները վերլուծելու այնպիսի մեթոդաբանութիւն, որը ներառի կոմիտասեան երաժշտական կառոյցի բոլոր բաղադրիչները. գեղջուկ երգի հնչիւնաշարի իւրայատկութիւններից մինչեւ liedի առանձնայատկութիւն, հոգեւոր եղանակների մեղեդիակերտ բազմաձայնութիւնից մինչեւ Վերածննդի խմբերգային բազմաձայնության օրինաչափութիւններ, մինչեւ Ի. դարի յօրինողական հնարանքներ եւ նորարարութիւններ: Համաշխարհային յօրինողական արուեստում Կոմիտասն առաջին հերթին առանձնացնում էր գերմանական, ֆրանսական եւ ռուսական ազգային երաժշտական դպրոցները: Անհրաժեշտ է նայել նաեւ այս ուղղութիւններով:

Մեր խորին համոզմամբ, Կոմիտասին վերլուծելու համար պէտք է հիմնուել հենց կոմիտասեան երաժշտատեսական դրոյթների եւ մասնագիտական եզրաբանութեան վրայ: Մեթոդ, որ կիրառել են անուանի կոմիտասագէտները:

Պատահական չէ, որ որոշ հայ մտաւորականներ համարում են, որ միակ կոմիտասագէտը հենց Կոմիտասն էր: Տեսակէտի մէջ ճշմարտութիւն կայ: Կոմիտասը երեւոյթ է՝ որպէս հայ հոգեւոր եւ աշխարհիկ երաժշտութեան կրող, ժամանակակից յօրինողական հնարանքներին տիրապետող, խմբավարական եւ երգչական տաղանդով, մանկավարժական հմտութեամբ օժտուած տիեզերական երաժիշտ, «Հայ երաժշտութեան աստուածային Խորամուխ էութիւնը» բացայայտած հանճար[24]:

Լինելով կոմիտասեան բազմաշերտ մտքերի մէջ՝ կարող ենք ասել, որ Կոմիտասի վերլուծութեան բանալին հենց Կոմիտասն է տուել: Դեռ ասպարէզում չկայ Լօռուայ հոռովելի կոմիտասեան վերլուծութեան համարժէք ուսումնասիրութիւն[25]:

2. Կոմիտասի երաժշտական կերտուածքի մէջ կարեւորում ենք՝ ներդաշնակման խնդիրը[26]: Այս հարցի շուրջ հիմնաւոր յօդուած է գրել Աթայեանը

---

[24] Կոմիտաս Վարդապետ, «Հայ երաժշտութեան յաղթանակը», *Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք Բ*, աշխ.՝ Գուրգէն Գասպարեան եւ Մարինէ Մուշեղեան, Սարգիս Խաչենց հրատ., Երեւան, 2007, էջ 195:

[25] «Ազգային պատրաիքարանի արխիւը Կոմիտաս վարդապետի մասին», *Շողակաթ, տարեգիրք, կրօնաբարոյական, գրական եւ պատմաբանասիրական,* Պատրիարքութեան հայոց Թուրքիոյ, Իսթանպուլ, 1970, էջ 14-43. նաեւ՝ Աթայեան, «Ժողովրդական երգի ներդաշնակութեան», էջ 98:

[26] Ներդաշնակման հետ կապուած հետաքրքիր դիտարկումներ ենք կարդում հենց Կոմիտասի 1900ի դասախօսութիւն–յօդուածում, որը դաշնակութեան վերաբերեալ նրա խորը իմացութեան վկայութիւնն է: Համահնչիւնների կառուցուածքների եւ զուգորդումների մասին այդչափ հիմնաւոր տեսական գիտելիքների կը հանդիպենք Կոմիտասի ոչ-բոլոր ժամանակակիցների մօտ (համաշխարհային երաժշտութեան չափումներով): Յայտնի է, որ Կոմիտաս վարդապետը բանաստեղծութիւններ է գրել եւ առնչութիւններ է ունեցել բանասէրների, գրողների եւ բանաս-

դեռեւս 1949ին: Իր վերլուծական-տեսական ուսումնասիրութեան մէջ նա նշում է, որ Կոմիտասը՝ ա) պահպանեց ժողովրդական երգի լադային առանձնայատկութիւնները, հայկական երաժշտութեան լադերը, բ) կլասիկ *ֆունկցիոնալ* ներդաշնակութեան հիման վրայ ստեղծեց այդ լադերից բխող ներդաշնակ լեզու, լադային ներդաշնակութիւն, գ) բազմաձայնութեան ասպարէզում սկզբունքօրէն առաջնորդուեց ոչ թէ *հոմոֆոնիկ* մտածելակերպով, այլ *իմիտացիոն* եւ ենթաձայնային բազմաձայնութեամբ, որը հնարաւորութիւն էր տալիս ազգային մելոդիկան յատկապէս խմբական երգեցողութեան մէջ աւելի ցայտուն կերպով արտայայտելու, եւ, վերջապէս, ով ստեղծեց հայկական ժողովրդական երգի կերպարները, հայ գեղջուկն ու հարազատ բնութիւնը պատկերելու համար անհրաժեշտ ներդաշնակութեան հիւսուածքային մշակման ու գունագեղութեան իր ձեւերը[27]:

Մենք հնարաւորութիւն ունեցանք դեռ մասամբ ծանօթանալու Լենինկրատի երաժշտանոցի շրջանաւարտ, ականաւոր տեսաբան Ռաֆայէլ Ստեփանեանի՝ 1970ին պաշտպանած «О своеобразии аккордовых структур в гармонии армянских композиторов» (Համահնչիւնային կառոյցների ինքնատիպութիւնը հայ յօրինողների ներդաշնակութիւններում) թեկնածուական հետ, որտեղ նա հիմնաւորում է լադային հիմքով կառուցուած Կոմիտասի ներդաշնակման նոր սկզբունքերի համակարգը: Այս համակարգը օգնելու է Կոմիտասի ստեղծագործութիւնները դիտարկել ժամանակակից յօրինողական հնարանքների ենթահողում:

3. Մեր կարծիքով, կարեւոր եւ առանձին ուսումնասիրութեան նիւթ կարող են դառնալ Կոմիտասի ստեղծագործութիւնների խօսքի առանձնայատկութիւնները, բարբառները, Կոմիտասի երգերի լեզուն, ոտանաւորի տաղաչափական, վանկաչափական յատկանիշերը:

Կոմիտաս վարդապետի երգերի, խմբերգերի խօսքերի տաղաչափական եւ բարբառային առանձնայատկութիւնները հետաքրքրել են նաեւ նրա ժամանակակիցներին[28]: Իսկ հայոց լեզուի կարեւորութեան մեծագոյն ջատագովը կրկին Կոմիտասն է: Նրա բնորոշմամբ. «Լեզուն երաժշտութեան զարկերակն է»... կամ՝ ինչպէս գրում է իր «Ձեռաց տետրակ»ում գեղջուկի բառը բնորոշելիս. «Բառ ասել, խաղ ասել, խաղ կանչել»[29]:

տեղծների հետ, ինչպէս՝ Յովհաննէս Թումանեանի, Աւետիք Իսահակեանի, Դանիէլ Վարուժանի, Հրաչեայ Աճառեանի: 1903 Օգոստոսին Վաղարշապատում լոյս է տեսել նրա եւ Մանուկ Աբեղեանի *Հազար ու մի խաղ* ժողովրդական երգերի ժողովածուի առաջին յիսնեակը:

[27] «Ազգային պատրաիքարանի արխիւը Կոմիտաս Վարդապետի մասին», էջ 14-43:

[28] Նոյն, էջ 14-43:

[29] Welchen Einfluss hat das Orff-Schulwerk auf Medizin und Psychologie, «Österreichische Muzikzeitschrifft», Austria, 1962, H, 17 (Կարլ Օրֆի երաժշտամանկավարժական դպրոցի ունեցած ազդեցութիւնը բժշկութեան եւ հոգեբանութեան վրայ):

4. Ինչպէ՞ս է հայ արդի երաժշտակատարողական արուեստը մեկնաբանում եւ գործնականօրէն կիրառում Կոմիտաս վարդապետի՝ կատարողներին աւանդած հմտութիւնները: Ինչպէ՞ս են կիրառում նրա մանկավարժական սկզբունքներն ու գեղագիտական հայեացքները, որոնք իրենց արդիականութեամբ կարող են մրցել դաստիարակութեան համակարգեր ձեւաւորած եւրոպացի հեղինակաւոր երաժիշտ-մանկավարժների հայեացքների հետ, մանաւորապէս գերմանացի յօրինող եւ մանկավարժ Քարլ Օրֆի մանկավարժական-գեղագիտական հայեացքների հետ[30]:

Այս բնագաւառում էլ անելիքները շատ են: Ոչ միայն անհրաժեշտ է վերահրատարակել կոմիտասեան ասոյթներն ու մտքերը, այլեւ անհրաժեշտ է լրջօրէն խորամուխ լինել այդ մտքերի տողատակերում թաքնուած կոմիտասեան բնորոշում-մեկնաբանութեան, ապագային ուղղուած ասելիքի մէջ: Կոմիտասի մանկավարժական մեթոդները անհրաժեշտ է կիրառել կրթական ծրագրերում

Կրկնում ենք՝ Կոմիտասի միտքը խտանիւթ է, որի թանձրութիւնը նման է արքայատան ներկատներում պատրաստուած որդան կարմիրին, որը նօսրացնելով բազում երանգներ են ստանում:

Եւ վերջապէս.

5. Ի՞նչ նոր վաւերաթղթերով է համալրւում կոմիտասեան արխիւը, ի՞նչ ուղղութիւններով եւ հրապարակումներով է զարգանում արդի կոմիտասագիտութիւնը: Նորայայտ վաւերագրերը, նամակները կամ լուսանկարները, Կոմիտասի ժամանակակիցների գրութիւնները պէտք է մանրամասն եւ համակարգուած ուսումնասիրուեն:

ԱՐԴԻ ԿՈՄԻՏԱՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ինչպէ՞ս են արծարծւում կոմիտասագիտական հիմնախնդիրներն առհասարակ: Որո՞նք են մեր նուաճումներն ու բացթողումները: Ինչպէ՞ս են շարունակւում Կոմիտասի՝ հայ երաժշտութեան բոլոր բնագաւառներում ձեւաւորուած աւանդոյթները, երաժշտատեսական դրոյթները, ինչպէ՞ս են լուսաբանւում նրա գեղագիտական հայեացքները, նրա կենսագրական փաստերը, որոնք այսօր անչափ արդիական են: Որպէս ազգային եւ համամարդկային արժէք՝ Կոմիտասի ժառանգութիւնն այսօր էլ երիտասարդ ուսումնասիրողի համար գիտական բացայայտումների նիւթ է դառնում: Այսօր էլ Հայաստանի եւ Սփիւռքի հեղինակաւոր հանդէսներում հրապարակւում են մեծ Վարդապետի անձն ու գործը լուսաբանող յօդուածներ[31]:

---

[30] «Ազգային պատրաիքարանի արխիւը Կոմիտաս վարդապետի մասին», էջ 14-43:

[31] Մասնաւորապէս, հարկ է առանձնացնել Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի մասնակցութիւնը կոմիտասեան ձեռագրերի արխիւային նիւթերի պահպանման, մշակման, թուայնացման եւ հրապարակման գործընթացում բանասէր, բնագրագէտ Գուրգէն Գասպարեանի աշխատանքը:

2015 Յունուարի 29ին Երեւանում բացուեց Կոմիտասի թանգարան-ինստիտուտը: Մայր Հայրենիքում կազմակերպւում են Կոմիտաս վարդապետին նուիրուած փառատօներ եւ միջազգային գիտաժողովներ: Գովելի է, որ հայ երաժշտագէտներից շատերը հանդէս են գալիս միջազգային գիտաժողովներում՝ օտարալեզու լսարանին ծանօթացնելով Կոմիտասի ժառանգութեանը:

2019ից Երեւանի Կոմիտասի անուան պետական կոնսերվատորիայի երաժշտագէտների համար կազմած կրթական ծրագրում իբրեւ հեղինակային դասընթաց ներմուծուեց մանրամասն մշակուած եւ կոնսերվատորիայի գիտական խորհրդի կողմից հաստատուած «Կոմիտասագիտութիւն» դասանիւթը, որն ուսումնասիրում է կոմիտասագիտութեան ձեւաւորման եւ զարգացման շրջափուլերը, Կոմիտասին վերաբերող նորայայտ նիւթերն ու վաւերաթղթերը: Դասանիւթի շրջանակներում կազմակերպւում են համերգ-դասախօսութիւններ՝ Կոմիտաս վարդապետի երաժշտութեան վերլուծութեամբ ու քննարկումներով:

Կարելի է երկար թուարկել արդի կոմիտասագիտութեան ձեռքբերումները:

Հասկանալի է, որ լուրջ ծրագրերը կապուած են հնարաւորութիւնների, ինչու ոչ՝ նաեւ աշխարհաքաղաքական իրավիճակի հետ: Կոմիտասի քարտէզագրութիւնն ու եղերական վախճանը այսօր էլ բազմաթիւ հարցեր են առաջացնում նրա ձեռագրերի, նրան վերաբերող թղթերի յայտնաբերման հետ: Այս պահին մեր ձեռքին է Ստամպուլի *Շողակաթ* տարեգրքում հրապարակուած Պոլսոյ պատրարքարանի ներկայացուցիչների եւ Կոմիտասի խնամատար յանձաժողովի անդամների նամակագրութիւնն ու Կոմիտասին վերաբերող արժէքաւոր գրութիւնները: Մանրամասն ուսումնասիրութեան մի նիւթ[32]:

Ներկայ մարտահրաւէրների բարդ ժամանակահատուածում, երբ շատերիս մօտ կարող է ծագել նոյնիսկ ֆիզիկական անվտանգութեան հարցը, մշակութային նորօրեայ իրականութեան մէջ ինչպէ՞ս ենք պահպանելու մեր բարոյահոգեբանական, մշակութային անվտանգութիւնը, ինչպէ՞ս ենք արժեւորելու Կոմիտասի առաքելութեան դերն ու նշանակութիւնը:

Կոմիտասով զբաղուելը բարդ ու չափազանց պատասխանատու ոլորտ է. հայ երաժշտագիտութեան ամենաբարդ ոլորտներից մէկը:

Ինքը՝ Վարդապետը համարում էր, որ ոչ թէ գաղթօճախում, այլ **Մայր հողի վրայ պէտք է զարգանայ *իսկական գեղարուեստը*[33]:**

Նրա ջանքերով իրականացուել է Կոմիտասի երաժշտագիտական ժառանգութեան, նամականու, նկարների յուշագրքի, յուշագրութիւնների հրատարակումը:

[32] «Ազգային պատրաիքարանի արխիւը Կոմիտաս վարդապետի մասին», էջ 14-43:

[33] Կոմիտաս Վարդապետ, *Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք Բ*, էջ 80-2:

Յուսանք, որ կոմիտասագիտութեան ընթացքը կը գնայ խաղաղ ու հանդարտ հունով, պետական հոգածութեամբ, լայն եւ ըմբռնող լսարանի համար, նուիրեալ երաժշտագէտների նոր ուսումնասիրութիւններով:

Կրկին առաջնորդուենք կոմիտասեան մտքերով. «*Ես տարիներու աշխատանքով շիներ եմ իմ ուղեգիծը, ուրկէ ընթացեր եմ ցարդ եւ պիտի ընթանամ ասկէ եւրք ալ որքան ատեն որ ուժ գգամ երակներուս մէջ. ոչ մէկ խոչընդոտ չի կրնար կասեցնել զիս իմ առաքելութեանս մէջ. որուն նուիրականութեանը համոզուած եմ ես բոլոր սրտովս*»[34]:

CURRENT ISSUES OF KOMITAS STUDIES

(Summary)

LUSINE SAHAKYAN
lusine_sahakyan72@mail.ru

Studies on the musical legacy of Komitas represent one of the developing fields of Armenian musicology. Over the course of almost a century, impressive volumes have seen the light in Komitas studies. A significant part of these volumes are studies of his biography, musical career and musicological heritage or analyses of his musical endeavors and compositions. Several volumes of his transcriptions of Armenian ethnological and folkloric music have been published, too. Furthermore, diverse studies have focused on his artistic and aesthetic views.

Komitas Vardapet was not only the founder of Armenian National music and composition, but also one of the founders of Armenian folkloric and medieval music studies. He is considered the one who laid the scientific bases of these studies. His theoretical and comparative studies marked the paths for the further development of ethnomusicology in general and Armenian ethnomusicology in particular.

The paper summarises how Komitas' musical heritage is evaluated, as well as how it has impacted contemporary Armenian musical output, and assesses its influence on current Armenian music education. The paper looks as well at the main study tracks of Komitas' legacy.

[34] Նոյն, էջ 198: